

Յարգանքի և Պատիվի 8 ՄՅՏ
Պատվոգրի 10 ՄՅՏ
Պատվոգրի 4 ՄՅՏ
Պատվոգրի 5 ՄՅՏ
Բարձրագույն Թերթի գին 60 փրյ.
Կանոնական տոգր սեղանի հա-
մար 2 փրյոս, արգել անգամի հա-
մար 2 փրյոս, և երկ անգամներու
համար զատ անգամներու համար
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ե.Զ.Դ

Մեր գաղափարն ալ յարգող բա-
ժանորդաց կ'ընդունենք, որ եթէ լը-
րագրոյս կանոնադրապէս և անյա-
պաղ իրենց ձեռքն հասնիլը կուզեն,
փոխադարձաբար իրենք ալ լրագրոյս
տարեկանը կանոնադրապէս և ան-
յապաղ պէտք է վճարեն :

Այս գեղեցունքն ընելու կը հար-
կադրեն մեզ դժբաղդաբար մեր գա-
ղափարն ալ բաժանորդներէն շատեր,
որք լրագրոյս բաժանորդադիւր տա-
րեկանէն դոնէ մինչև երեք ամիս վը-
ճարելու կը դժկամակնին, և ոմանք ալ
մինչև տարւոյն վերջն և հետեւեալ
տարին իսկ կը յապաղեն : Տարակոյս
չկայ, որ այսպիսի բաժանորդք իրա-
ւունք չեն կրնար ունենալ զանգա-
տելու եթէ լրագրոյս գործակալու-
թիւնն ալ չիւլթայ կանոնադր ճշ-
գումբեամբ ամեն բոլոր լրագիրս
իրենց ձեռքը հասցնել, բոլորայի
ծախք վճարելով շարունակ, և սպա-
մելով որ բազում ամիսներ կամ տարի
անցնելէ ետեւ հուսկ ուրեմն իրենց
ալ կամեն ըլլայ բաժանորդադիւր
վճարելու :

Եթէ կը վախնան որ բաժանորդա-
դիւր կանխիկ վճարելով կրնայ իրենց
ստակը կորստեան վտանգի հանդի-
պիլ լրագրոյս հրատարակութեան իս-
պառ դադարմամբ, միթէ մեք ալ
փոխադարձաբար իրաւունք չունինք
վախնալու թէ 6—8—10 ամիս կամ
տարի մը և աւելի ժամանակ բոլորա-
յի ծախք վճարելով լրագիր յուզար-
կելէ ետեւ կրնայ մեր բաժանորդը
վախճանիլ կամ անանկանալ և կամ մեր
տարեկանը կրնալու փորձ փորձել,
ինչպէս որ շատ անգամ պատահած
է, և վրայ տուող միշտ մեք եղած
ենք քսանհինգ տարիէ 'ի վեր, մինչ
դեռ մեր բաժանորդք երբեք չըկանք
մը կամ քիչ մը կրտած չեն մեր ե-
րեսէն :

ՊԱՏԱՆԴՆՈՒՊՈՒՄ 22 ՄԱՅԻՍ

ՔԱՆԱԿԱՆ

Մուլթան Մուրտտ Ե. իւր կայսե-
րական իրաւասութիւնը գործադրել
սկսաւ : Հինգշաբթի օրը Մեծ-Ե.
պալատն և այլ նախարարք, որք
մեծ մասամբ երկու օրէ 'ի վեր կայ-
սերական պալատն էին, Բ. Գուռն

* Յուշելով կը պարտաւորինք յայտնել
թէ այս տեսակ անկրաւ անձինք ալ երած
են մեր դէմ, որք վեց ամիս կամ տարի
մը շարունակ լրագիր ստանալէ ետեւ իս-
թանորդադիւր չեն ուզած վճարել : Այս-
պիսեաց անունները մտադիր ենք հրա-
տարակել, որպէս զի տգիւր և մասնաւոր
Պատրիարքարանը տեսնէ թէ գաղափար

եկան : Ժամ 7 ին միջոցները՝ կայսեր
առաջին քարտուղար Վսեմ Սատու-
լաճ պէյ հանդիսաւոր կերպիւ խաթ-
թի—Հիւանդուն մը բերաւ, որուն ան-
համբեր կերպիւ կ'ապառաւէր երկու
օրէ 'ի վեր : Ահաւասիկ այս կարեւոր
հրովարտակն թարգմանութիւնն,
ըստ թուրքերէն բնագրին :

“Իմ Մեծաշուք վէզիրս Մէհմեդ
Բիւշտի փաշա :

“Շնորհիւ Բարձրելոյն և մեր հա-
մայն հպատակաց ընդհանուր բազ-
մանօք, մեր Օգոստոսիառ նախնեաց
դահլը բարձրացանք : Ձեր փորձեալ
գործունէութեան ու հաւատարմու-
թեան համար Մեծ—Եպարքոսական
պաշտօնը ձեր վրայ կը հաստատենք,
նմանապէս ամեն նախարարներն ու
պաշտօնատարներն իրենց պաշտօնին
մէջ կը վերահաստատենք :

“Սմեռուն յայտնի է որ ժամանակէ
մ' 'ի վեր տէրութեան ներքին և ար-
տաքին գործերը գլխաւորութեան մէջ
իյնալով, հասարակային կարծեաց
անխտահալութիւն, դանձու և երկ-
րին շատ մը քննանք, և ամեն տեսակ
անհանդատութիւնը ծագած էին :
Նախ քան զամենայն այն վիճակին
բարեօրոշման երկրին և համայն հը-
պատակաց ապահովութիւնը, բարո-
յական և նիւթական վերելութիւնն ու
երջանկութիւնը յարգարող ճանքայ
մը բռնել հարկ է, որ ուրիշ կերպիւ
չ'կրնար ըլլալ բայց եթէ տէրութեան
վարչական գրութիւնն հաստատուն
և ճշմարիտ հիմանց վրայ դնելով :

“Մեր կամքն ու դիտաւորութիւնն
ալ միշտ այս կէտիս վրայ հաստատ-
ուած է. ուստի Շէրիի տրամադրու-
թեանց գործադրութեամբն հան-
դերձ տէրութեան ընդհանուր վար-
չութիւնն իրաց բնութեան և ժողո-
վրդոց ընդունակութեան համեմատ
հաստատուն կանոնք պէտք է ամրա-
պնդելը Մեր բոլոր կայսերական հալ-
տակներն՝ առանց բացառութեան
կատարեալ ազատութիւն պիտի վա-
յելեն : Սմեն տեսակ յառաջիկ
մութիւն ձեռք բերելու և ընդ-
հանուր հաւատակաց սերն և հայրեն-
եաց պահպանութեան մասին տէրու-
թեան ու ազգին միաբանութիւնն ա-
պահովելու համար պէտք եղած ձեւն
և հաստատունն ու ապահով սկզբան
մը լաւագոյն հիմները գտնելու վրայ
նախարարք իրենց մէջ խորհելով
ստուած որոշումին մեր հաւանու-
թեանը պիտի ներկայացնեն :

“Այս հիմնական դիտաւորութեան
համեմատ Պետական խորհուրդն,

մէջ խօսքի տէր եղող՝ աղագլխութիւն
ծախող, և օրէնք իրաւունք արդարեւ
թիւն պարտաւոր տալով ինչ էջէն
րէ ոմանք ինչ աստիճան չարաչաճ և ա-
ւարակաբար, մարդիկ են, որք լրագ-
րոյ մը տարեկան իսկ կրնալ կը յան-
դըլնին :

Արդարութեան բարձրագոյն Ատեա-
նը, հասարակաց կրթութեան և ե-
լումնոց նախարարութիւններն ու
վարչութիւններն, ինչպէս նաեւ ամեն
պաշտօնները վերակազմել հարկ է.
ուստի ասոնց ալ կարգաւ վերակազ-
մութեանը պիտի նայուի :

“Տէրութեան գործոց մէկ մեծ
ծիւղն ալ ելմտականն է. այս մասին
'ի գործ գրութիւնը վերանորոգման
համար ելմտական գործողութիւննե-
րն ապահովութեան ներքեւ պէտք է
դնել, այն է ելմտական հաշուեցոյցէն
դուրս ծախք չ'բանալու համար ընդ-
հանրութեան ապահովիչ օրէնք մը
դնել, և իսկաւ հսկողութիւն մը հաս-
տատել :

“Իբր օժանդակութիւն այն կար-
գադրութեան, մեր կայսերական ծա-
խոց գումարէն վախճուն հազար
քսակ կը ղեղչենք, և մեր անձնական
դանձուն յատկացեալ էրէյիլի ած-
խահանքներուն և ուրիշ հանքաց և
գործարանաց եկամուտներն ելմտա-
կան պաշտօնատան կը թողունք : Սի-
րիշ կողմերէ ալ այսպիսի բարեօրոշմ-
ներ ու խնայութիւններ 'ի գործ դնե-
լով, ելմտական հաւատարակչութիւն
ձեռք բերելու հոգ պիտի տարուի :
Բարեկամ տէրութեանց հետ հա-
տատուած դաշնագրութիւնները կա-
տարեալ պիտի գործադրեն, ասոր
հետ իմիստին ամեն տէրութեանց
հետ մեր ունեցած բարեկամական
յարաբերութիւններն ամրապնդելու
և աւելցնելու պէտք է աշխատուի :
Այս է ահա մեր դիտաւորութեանց
բովանդակութիւնը Բարձրեայն Ատե-
ուած ամենուս յաջողութիւն շնորհէ :

Ինչպէս որ կը տեսնուի, կայսե-
րական այս նոր ծրագիրն առաջին
անգամ հասարակաց կարծիքը կը
ճանչէ և զայն գոհ ընելու միջոցներ
կը հրամայէ Առանց Շէրիի տրամադ-
րութիւնները մոռնալու, ժողովրդոց
ընդունակութեան համեմատ հաստա-
տուն կանոններ դնել կաւաքարիչ,
զորս նախարարաց կը թողու խորհիլ
և կայսերական հաւանութեան ներ-
կայացնել : Ելմտական հաւատարա-
կը շուտիւնն ապահովելու համար
հաշուեցոյցէն դուրս ծախք չ'բանալու
սկզբունքը կը հրատարակէ, և բոլոր
պաշտօնատանց մէջ բարենորոգում և
խնայութիւն 'ի գործ դնել կը պատ-
ուիրէ : Ծրագիրը թէ և տակուն
ընդհանուր սկզբունք միայն կը պա-
րտաւորէ, բայց և այնպէս հասարա-
կաց կարծիքը կրնայ գոհ ընել եթէ
բարենորոգումն իրապէս 'ի գործ դը-
ուի, որուն իւրաքանչիւր ոք ակնկա-
լու է, քանզի մինչև ցարդ դեղեցիկ
ծրագիրներ չ'են որ կը պարկին, այլ
գործադրութիւնն է Բարեկազմաբար
ընդհանուր վտանգութիւն մը կայ-
թէ նոր թագաւորութիւնը գործադ-
րութեամբ պիտի սկսի, որով միայն

կրնայ երկիրը ներկայ գծաւորու-
թիւններէն ազատիլ :

Արդէն իմացուած էր թէ Սուլթան
Ապտիւլ—Ազիզը գահակցութեան
համար Շէյխ—Իւլ—Խալամ հասան—
խայրուլաճ էջիէնովն ֆէթվա տուեր
էր. ահաւասիկ այն ֆէթվային թարգ-
մանութիւնն ալ :

“Եթէ իսլամ հաւատացեալոց գլու-
խը մտաց խանդավառ և քաղաքա-
կան գործոց տղխութեան նշաններ
տայ, եթէ տէրութեան եկամուտ-
ներն երկրին և ազգին կարողութե-
նէն վեր իւր անձնական ծախուց գոր-
ծածէ, և կրօնական ու աշխարհական
գործերը խանդալէ ու չիւլթութեան
մէջ ձգէ, եթէ երկրին ու ազգը կոր-
ծանէ և իւր պաշտօնավարութիւնը
քնասակար ըլլայ երկրին և ազգին,
իւր անկումը հարկ կըլլայ : — Պա-
տասխան. Այո :

Սուլթան Ապտիւլ—Ազիզը գահին
կեցութեան ֆէթվան կատարեալպէս
օրինաւոր և տրամաբանութեան հա-
մաձայն է : Արդարեւ իւր բրած շա-
րունակ փոխութիւններովն և ա-
մեն պարագայից մէջ իւր հաճոյքէն
զատ ուրիշ կանոն չ'ճանաչելով վա-
րաց 'ի վեր մտաց խանդավառ յայտ-
նի նշաններ ցոյց տուած էր, և տե-
րութեան եկամուտներն անպիստա-
յնալ լրացութեամբ վտանգելով, գլխաւո-
րաբար ինք պատճառ եղած էր այն
ահագին պարտուց և մեծագումար
տոկոսներով փոխառութեանց, որք
դանձուն վրայ ծանրացան, և վեր-
ջապէս տէրութիւնը պարտաւորեցին
վճարումները դադարեցնելու, որոց
քննանք ընդհանուր եղաւ : Բայց Ապ-
տիւլ—Ազիզը առանց բնաւ հոգ ընե-
լու կը շարունակէր իւր քանաճ ըն-
թացքը : Քանի մը տարիէ 'ի վեր իւր
սիրելի մէկ նպատակն ալ էր Օտման-
եան գահուն օրինաւոր ժառանգը
զրկել 'ի նպատակ իւր անդրանիկ
որդւոյն Եուսուֆ իզէտաօլին էջիէն
տիի : Ասոր համար ալ ոչ միայն ա-
նարժան մարդոց սարքաւորելու տար-
այլ և իրեն հաճոյք մ'ըրած էր գան-
ձըն եկած ստակին մեծ մասը քաշել և
պալատը դիզել : Ահա այս դիզուած
ստակն ալ, որ տոմսեկինդ տարի
իւր թագաւորութեան միջոցին մեծ
կակ դուռնարի մը հասած է, նախա-
րարաց ձեռամբ արձանագրեցաւ, և
եւրամից պաշտօնատան պիտի յանձ-
նուի, մասամբ իւրք եւ մնացած ամ-
սականներու վճարման, և տէրու-
թեան անհրաժեշտ պիտոյից գոր-
ծածուելու համար : Հարկաւ այս
գումարէն մեծ մաս մ'ալ տէրութեան
սեղանաւորաց և վաճառականաց ու-
նեցած պարտուց վճարման պիտի
սահմանի, որով ժամանակէ մ' 'ի վեր
մայրաքաղաքի մէջ ընդհանրացած
գրամական տագնապն ու նեղութիւն-
ներն եթէ ոչ բոլորովին գոնէ ըստ
բաւականին կը փարատի :

Նոր դահակալութեան վրայ լոնտոնայէն ու փարիզէն առնուած հեռագրայութեանը կը ծանուցանեն թէ փոփոխութիւնը գոհութեամբ ընդունուած է Արեւմտեան Եւրոպայի այս երկու մայրաքաղաքաց մէջ։ Պաշտօնապէս ընդունելութիւնը դեռ չը ծանուցաւ, բայց այս մասին ալ կարծենք դժուարութիւն չպիտի ըլլայ։ Այս պարագայից նայելով՝ առայժմ աշխարհագրութիւնն իւր կարեւորութիւնը կը կորուսանէ, և մինչև որ նոր վեհապետին պաշտօնապէս ընդունելութիւնը կատարի, և դեռ պահանջուի փոխարքայ՝ վկայագրերը նորոգին և ներկայանան, դեսպանական բանակցութիւնները, ծանուցագրերն ու գործողութիւնները բընականաբար պահ մ'ետ կը մնան։ Այսու ամենայնիւ քաղաքական վիճակն ալ անտարակոյս մեծ բարեփոխմը պիտի կրէ։ Անգղիական լըրադիքը կը յայտարարեն թէ տէրութիւնները պէտք է օգնեն թուրքիոյ վերանորոգիչ ջանից։

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 1 յունիս.
Թուրքիոյ դեսպան Ստեփան Բալան իւր դեսպանական նոր վկայագրերը շաբաթ օրը պիտի ներկայացնէ հանրապետութեան նախագահին։

Վիեննա 1 յունիս.
Նովել Բրէն Լիպր Լոպրին Էմիլ թղթակցը կը ծանուցանէ թէ Ալեքսանդր կայսրն ինչ ինչ լուրեր ստացած ժամանակ մարտի է։

Յիսուս երեք Պոնտիքի ընտանիք իրենց տեղը վերադարձնել են։ Ուրիշներ ալ վերադառնալու կը պատրաստուին։
1863ի փոխառութեան վիճակահանութիւնը կատարուելով 312 սէրին 27 թիւն առաջին պարզեւ շահեցաւ։

Բեղրադուրի 1 յունիս.
Բեղրադուրի Ժուրնալ լրագիրը վերադառնալու առին որ իւր օրագրական տէրութեանը անդու ջանքիւ խաղաղութիւնն անվրդով պիտի մնայ։

Փարիզ 1 յունիս.
Սուլթան Մուրատի դահակալութեան լուրն համակրութեամբ ընդունուեցաւ հոս։

Տըքսիզի դաքան առաջարկեց լորտ Տէրպիլի որ նախ Անգղիոյ կառավարութիւնը ճանաչէ նոր Սուլթանը։

Լոնտոն 1 յունիս
Մամուլն առհասարակ իր Պոլսոյ նոր դահակալութեան արդեանքը կոպտէ վստահութեամբ։

Լոնտոն 2 յունիս	
Վաճ. Բոն.	42 13/16
Փոխ.	44
»	4869 43 3/8
»	4874 48 1/2
»	4872 20 1/2
»	4873 43 1/4
Ներգր.	33 1/4
Անգլ. Բոն.	93 13/16

Լիւբլու 2 յունիս	
Բաւ. Կոս. Միտիլի-Օրէն	6 1/8
» Պար Տօրէրաճ	4 3/8
Ճարտուած 8000 հակ.	

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Տամատ Մահմետ փաշան առեւտրական գործող նախարար անուանեցաւ։

Վեհ. Սուլթանին Լալա Սիւրէյման աղան Կայսերական պալատին ներքինապետ անուանեցաւ։

Խրիսթաքի Զօրաֆօս Էֆէնտի մեծահարուստ յոյն սեղանաւորը Բարձր Մայր Թագուհւոյն սեղանաւոր անուանեցաւ։

Ֆաթիհի Թաղին ոստիկանութիւնը Պէշիկիտաշ, և Պէշիկիտաշի ոստիկանութիւնն ալ Ֆաթիհի Թաղը փոխադրեցաւ։

Հինգշաբթի օրը Կայսերական խաթիւն ընթերցումէն ետեւ, տէրութեան նախարարներն ու բարձրատիճան պաշտօնատարները կայսերական պալատն երթալով շնորհակալութիւն մատուցին։

Դաւորդ Մեծ-Էպոքոս Մահմետ Նէտիմ փաշա՝ Հինգշաբթի օրը Կայսերական պալատն երթալով Վեհ. Սուլթանին ներկայանալու և իւր շնորհակալութիւնը մատուցանելու պատիւ ունեցաւ։

Տէրութեան դաւաճներէն եկած հեռագիրք կը ծանուցանեն թէ Վեհ. Սուլթան Մուրատի դահակալութեան լուրը մեծ ուրախութեամբ ընդունուել է դաւաճաբնակ ժողովուրդներէն և երեք օր տօն կատարուել է։

Հինգշաբթի իրիկուն մայրաքաղաքի մեծ շուկան լրատարարելով մինչև առաւօտ բայց մնաց։

Բոսփորի նեղիցին մէջ ալ հրախուղութիւնք եղան։

Վերջապէս թէ մայրաքաղաքի և թէ շրջակայ տարածքներու մէջ զօրէից մէջ նաւագարանայ ձայներ և ուրախութեան աղաղակներ կը լսուէին տարածակայ պայծման և հրախուղութեան ձայներուն հետ։

Կը հաւատեն թէ Վեհ. Սուլթանին սուր կապելու հանգէն յառաջիկայ Հինգշաբթի օրը պիտի կատարի։

Մայրաքաղաքի նաւահանգիստն երկաթ նետած Անգղիական, Գաղղիական, Իտալական և Հելլենական պատերազմի նաւերը չորեքշաբթի օրը մեծ դրօշակ պարգեցին ի պատիւ Օսմանեան նոր վեհապետին, իսկ միւս տէրութեանց նաւերէն ոչ մին դեռ այդ պատուատրական ցոյցը չըբաւ։

Կայսերական դահակալ նաւախումբին հրամանատար Լիվա Սիւրի փաշային Ֆէրիքի ատիճան և Խասայի խորհրդին անգամ Հաճի Բէշիտ պէյ դնդապետին Միլիթիայի աստիճան տրուեցաւ։

Վեհ. Սուլթանն երէկ ցամաքի ճանրով Այա-Սօֆիայի մզկիթը դընայ և միջօրէի աղօթքին ներկայ գտնուեցաւ։ Անթիւ բազմութիւն լցուած էր Ն. Կ. Վեհապետութեան անցած փողոցներուն մէջ։ Ղալաթիայէն անցած ժամանակ ամեն ազգէ հաղարուստ ժողովուրդը Կիցցէ, Եաշա, Վիլմ, Զիթմ, կը գոչէին, և Ն. Կ. Վեհապետութեան ալ ժպտադէմ երկու կողմը կը բարեւեր երկու ձեռքը գլխուն տանելով։

Կըսուի թէ Վեհ. Սուլթանն իրեն ներկայացուցներուն արգիւր է այն խել մ'ստրկական նուստ ձեռքը քուսներն ու շարժումներն, որք անհրաժեշտ տարրութեանց կարգանցած էին։

Թուրքերէն Պատիւթ լրագրոյ խմբագիր-Տիւրէն Ալի Էֆէնտին չորեքշաբթի օրը ոստիկանութեան կողմէ բռնուելով բանտարկեցաւ։ Կըսուի թէ Բ. Գառնէն առ նախորդ կայսերական արքունիքը լրտեսութիւն կընէ եղեր։

Շէմ, Լիքեթար և Մէտէնիթ լըրագրերը տպագրական դիւանին հրամանաւ խափանեցան։

Սուլթան Ապալ Ուղիւ, իւր խնդրանայ համեմատ, Չորեքշաբթի իրիկուն Թօփ դարուի պալատէն Չըրաղանի պալատին յարակից ապա-

րանքը փոխադրուեցաւ ընտանեօք հանգերէ։

Վաքըթ լրագիրը կըսէ թէ Վեհ. Սուլթանն հրաման ըրեր է երեւոյց նախարարին որ տէրութեան պաշտօնատարաց անվճար մնացած ամսականները նախորդ Սուլթանին միջոցաւ հարստութեան վճարուին, որոյ գումարը լրագրէն ունենք 25, ու մանք 30 և ոմանք ալ մինչև 40 միլիոն իրայի հանեցին, բայց մինչև հիմա կայսերական պալատին մէջ գտնուած դրամական հարստութեան գումարն 8 միլիոն քոնսօլիտէն և մէկ միլիոնի մօտ ոսկի իրայի աւելի չէ։ Կըսուի թէ գտնուած անտուկներուն մեծ մասը դատարի են եղեր, և տարակոյս չէ մնացած որ պարպուել և ոտակներն ուրիշ տեղ փոխադրուել կամ պահուել են։ Յակայն գտնուել համար խաղաղութիւններ կըլլան, և արդէն Ս. Սուլթան Վալիէի մզկիթին դամբարանին մէջ պահուած երկու անտուկ գտնուել են։

ԱՌՍԱՆՆԵՐԸ	
ԵՍԶԱՄԵ ՌԱՄՈՒՄԻՆ	
21 մայիս. ուրբաթ իրիկուն	13.35
22 մայիս. շաբաթ առաւօտ	14.10
բացողը	14.26
ժամ 5 ին	
Կ. Պոլսի 21 մայիս.	
Վալիէի լիւրագրի բաժնիք Սիւրիքի	3, 15
« փոխանակութեան »	1, 20
Կ. Պոլսոյ Պաշտօնային »	3
Քրէտի ժէնէրալ »	2, 40
Քրէտի Սիւրիքի »	—
Երկաթուղիային »	39, 42
Փոխ. 4863 »	80
» 4865 »	80
» 4869 »	72
» 4872 »	22
» 4873 »	69
Թրաքուայի Սիւրիքի	4.30
ԲՆԱԿԱՆ ԳՐԱՐԱՆ	
19 ՄԱՅԻՍ	
Վալիէի լիւրագրի »	110 30
Նաւալի ուղի »	58 22
Իսթիլի Ռուս »	89 20
Գլխաւոր »	54 25
Հիւր ֆրանք »	—
Հիւրանոց »	108 20
Պոլսի »	439

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.

Երէկ աղբային ժողովը գումարեցաւ Ղալաթիա ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք հօր, և նախաքննիչ դիւանաց ընտրութիւնը կատարեց։ Միանգամայն նախորդ վարչութեանց համարառութիւնները քննելու և առ աղբային ժողովը տեղեկագրելու համար եօթն անգամ մէ բաղկացեալ համարառութեան յանձնախումբ մ'ընտրեց։

Ընտրութիւնները կատարուելէ ետեւ Ս. Պատրիարք հայրն համառօտ ատենաբանութեամբ մ'Օսմանեան պետութեան մէջ կատարուած վերջին մեծ յեղափոխութեան նպատակով փրկուած արդիւնքներն ազատեցաւ առաջարկեց յանուն Քաղիին շնորհաւորութեան ուղերձ մը տալ մեր նոր վեհապետին, աղբին արգար ու օրինաւոր իղձերը պատշաճաբար ներկայացնելով։ «Մեր աղբն որ հինգ դարէ ի վեր Օսմանեան պետութեան հաւատարմ հպատակութիւն ընելով նորա ցաւոցը ցաւակից եղած և իւր բաղդը նորա բաղդին հետ սերտիւ կապած է, իրաւունք ունի ըստ, իւր ցաւերը տէրութեան յայտնելու և օրինաւոր կերպիւ դարման խնդրելու»։

Ժողովը Ս. Պատրիարք հօր առաջարկութիւնը նկատողութեան առնելով, քանի մ'երեսփոխանաց խոհական դիտողութիւնները լսելէ ետեւ եօթն ձեռնհաս երեսփոխաններէ յանձնախումբ մը կազմեց, որպէս զի

Ս. Պատրիարք հօր առաջարկած ուղերձը պատրաստելով աղբային ժողովը ներկայացնեն, եթէ հարկ ըլլայ արտաքոյ կարգի նիստ գումարելով։

Ահաւասիկ Աղբային ժողովոյ բացման առթիւ Ամեն. Ս. Պատրիարք հօր խօսած ճառը։

« Տեարք երեսփոխանք Հայոց »

« Ինչպէս անցեալ տարի, նոյնպէս այս տարի բարեբաղդ կը համարիմ զիս Աղբ. ժողովը բանալու համար փառք կուտամ։ Առաւօտոյ որ այսօր ժողովոյդ այս անցեալ տարուան մէջ ունեցած շատ մը գործերը դրուատելու կարող եմ. վասն զի այս վերջին տարուան ընթացքիդ առաջինն աւելի արդիւնաւոր եղաւ ձեր վճռած և որոշած խնդիրներով, և ասոր պատճառն է կուսակցութեանց առջի տարիներուն չափ կիրք չը յայտնէին, և անցեալից նայելով ներկային մէջ փոխադարձ զօհողութիւններ ընելը, այս այսպէս ըլլալուն ետ կը վիայիմ, և կը մաղթեմ որ Աստուած արժանի ընէ զՁեզ աւելի արդիւնաւոր նիստերով այս տարին ալ յաջողութեամբ բոլորելու։ Քանի որ անցեալը ներկային հայելին է, մարդքս անցեալից վրայ նայելով կրնայ ներկան տեսնել և իւր պակասութիւններն ուղղել. պակասութիւն չունեցող չկայ. ժողովի մը անդամները կրնան սխալիլ, բայց ժողովը դժուարաւ կը սխալի. ուստի կը բարեմաղթեմ որ անցեալից վրայ ձեր ապագան աւելի արդիւնաւոր լինի։

Ըստ որում այսօր մեզի համար հաշիւ տալու օր է, և կը բաղձայի որ անցեալ տարուան պէս գրաւոր ներկայացնէի մեր գործառնութեանց հաշիւը. սակայն դրադմանցս յաճախութեան ժամանակ չունենալով գրաւոր ներկայացնել, պիտի ջանամ իմ վստահ ընտանացի համառօտել մեր հաշիւը։

Նախ՝ կը վկայեմ որ մեզ աջակից գտնուող վարչական ժողովներն ու խորհուրդներն ամեն ալ առ հասարակ աշխատեցան, աղբատիրաբար գործեցին և աղբային գործերը դիւանցնել ջանացին, որոյ ամենուն համար շնորհակալութիւնս կը յայտնեմ։ Գրեթէ ամեն անգամ մեծամասնութեամբ նիստ կազմեցին, և երջանիկ կը համարիմ զիս՝ որ առանց վարչական տագնապ մը յարուցանելու՝ մեր ժողովականաց ազգասիրութեան շնորհիւ կարող եղանք մեզ ներկայացեալ խնդիրներն ըստ կարի կարգադրել. իսկ մեր կարողութեանէն վեր և հինցած խնդիրները Պատրիարքի ժողովոյդ ներկայացնելով, շնորհ ունիմ, որ անոնց լուծմանը համար ճամբայ ցուցուցիք մեզ։ Վերջապէս՝ ներկայ վարչութիւնն ինչ որ կըցաւ ընել, զայն ըրաւ և չկըրցածն իւր յաջորդին թողուց։ Ինչպէս որ վարչութեան ժողովոյց ջանասիրութեանէն ու աշխատութեանէն ունեցած գոհունակութիւնս պարտաւոր եմ յայտնել, նոյնպէս նաեւ իմ հիւանդութեանս միջոցին վարչութեան ժողովոյ փոխ. նախագահութեան պաշտօն վարող Երկու որբադաններուն անձնուրութեանէն ունեցած շնորհակալութիւնս չեմ կրնար չը յայտնել առանց ապերախութեամբ ըլլալու։ Սակայն, ժամանակն, ինչպէս յայտնի է, խիստ դառն ըլլալով, մեր երմտական գործերը կանոնաւոր ընթացք մը չկրցան առնուլ. պէտք է խոստովանիլ որ թէ՛ վարչութիւնն և թէ՛ Տնտեսական ու Երմտական խորհուրդները մեծ ամեծ

